

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 25/3

26 հունիսի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արման Բաբլումյանի 01.06.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 21.05.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 284571 որոշման դեմ:

Ա/Ձ Արման Բաբլումյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Արման Բաբլումյանը գտնում է, որ 2014 թ-ի տարեկան հաշվետվությունը ուշ ներկայացնելու համար ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 21.05.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 284571 որոշմամբ նշանակված վարչական տուգանքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

1. Հաշվետվությունը հարկային տեսչության կայքում տեղադրվել է 2014 թ-ի ապրիլի 1-ից հետո ընկած ժամանակահատվածում: Ա/Ձ Արման Բաբլումյանը ապրիլի 5-ին ստուգել է հաշվետվության առկայությունը, սակայն այն դեռևս տեղադրված չի եղել:

2. Ա/Ձ Արման Բաբլումյանը հայտնում է, որ իր նկատմամբ կիրառվել է տուգանքի առավելագույն չափը, այն դեպքում, երբ հարկերը սահմանված ժամկետում չվճարելու և հաշվետվությունները ուշացնելու համար երբևէ պատասխանատվության չի ենթարկվել:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Արման Բաբլումյանը խնդրում է վերանայել ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 21.05.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 284571 որոշմը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 21.05.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 284571 որոշմամբ 2014 թ-ի տարեկան եկամուտների պարզեցված հաշվարկը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու համար Ա/Ձ Արման Բաբլումյանը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամ:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ Ա/Ձ Արման Բաբլումյանը ապրիլի 5-ին ստուգել է 2014 թ-ի տարեկան եկամուտների պարզեցված հաշվարկի առկայությունը, սակայն այն դեռևս տեղադրված չի եղել, հարկ է նշել, որ նշված հաշվարկի ձևը ապրիլի ս.թ. 9-ից արդեն իսկ տրեղադրված է եղել: Հետևապես 2015 թ-ի ապրիլի 9-ից մինչև 2015 թ-ի ապրիլի 15-ը ընկած ժամանակահատվածում Ա/Ձ Արման Բաբլումյանը կարող էր ներկայացնել 2014 թ-ի տարեկան եկամուտների

պարզեցված հաշվարկ, ինչով կխուսափեր «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվությունից:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված պնդումներին, որ կիրառվել է տուգանքի առավելագույն չափը, այն դեպքում, երբ հարկերը սահմանված ժամկետում չվճարելու և հաշվետվությունները ուշացնելու համար Ա/Ձ Արման Բաբլումյանը երբևէ պատասխանատվության չի ենթարկվել, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել, որ օրենսդիրը տուգանքի համար սահմանելով նվազագույն և առավելագույն շեմեր, տուգանքի վերջնական չափը որոշելու իրավունքը վերապահել է իրավակիրառողին՝ թույլ տալով տարբեր դեպքերում դրսևորել տարբերակված մոտեցումներ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 21.05.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 284571 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարանում:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝

